

Նկատի ունենալով, որ սույն անհատական դիմումով գործը քննության ընդունելու հարցով ՄԴ դատական կազմը միաձայնությամբ որոշում չի ընդունել, ՀՀ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ մասի՝ աշխատակարգային նիստում քննելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին Դավիթ Հարությունյանի դիմումի ընդունելիության հարցը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, գտնում է, որ գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմումի, ինչպես նաև կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածին համապատասխան անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ սովյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը դիմողի նկատմամբ կիրառվել է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից, սակայն նա վերաքննիչ

դատարանի ակտը վճռաբեկության կարգով բողոքարկել է ոչ ըստ օրենքով սահմանված կարգի:

ՀՀ վճռաբեկ դատարանի 26.08.2015թ. որոշմամբ դիմողի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության, «քանի որ վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է»:

Եթե դիմողն իր նկատմամբ կայացված վարչական վերաքննիչ դատարանի ակտը չի բողոքարկել վճռաբեկության կարգով, չնայած այն հանգամանքին, որ օբյեկտիվորեն ունեցել է այդ հնարավորությունը, ապա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել, որ դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Նմանատիպ հետևանքներ է առաջացնում նաև վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելն այն պարագայում, երբ վճռաբեկ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ առանց վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդության:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1254 որոշման մեջ հստակ նշել է, որ «երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքները հավաստող, վկայող ապացույցները»:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դեռևս 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին»
ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

Դավիթ Հարությունյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը
մերժել:

**ԾՆԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՎ ԴԻՄՈՒՄԻ ԿՐՈՒՄԻ
ԿՐՈՒՄԻ ԿՐՈՒՄԻ ԿՐՈՒՄԻ ԿՐՈՒՄԻ
ԿՐՈՒՄԻ ԿՐՈՒՄԻ ԿՐՈՒՄԻ**

Պ. ԾՆԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

26 օգոստոսի 2016 թվականի
հունիսի 29-ը